Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.1/[145986]-13

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-ԻՆ ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Հ. Հակոբյան	ՀՀ սփյուռքի նախարար
Գ. Գագյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ս. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ
Մ. Լալայան	ՀՀԿ-ի փոխնախագահ
Կ. Կիրակոսյան	տնտեսագետ, անկախ փորձագետ
Բ. Վարդանյան	«Հայք հաստատություն» ՀԿ-ի տնօրեն
Հ. Բերբերյան	ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Գ. Հարությունյան	«Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն
Ս. Սարուխանյան	«Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրենի տեղակալ

1. «Նորավանք» ԳԿՀ-ի գործունեության 2012 թվականի ամփոփ հաշվետվության մասին

(Գ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանի 2012 թվականի հաշվետվությունը:

2. «Նորավանք» ԳԿՀ-ի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին

(Գ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) Հաստատել «Նորավանք» ԳԿՀ-ի 2013 թվականի բյուջեն, հաստիքացուցակը և ծրագրային ուղղությունները:

2) հանձնարարել ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի հետ համատեղ այցելել Ամաղուի տարածք, տեղում ուսումնասիրել շենքային պայմանները և ըստ այդմ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել այդ տարածքի արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկություն.

3) հանձնարարել «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանին՝

ա. Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում միջազգային հանրությանը ներկայացնել Ազգային հիշողությունների հարցը,

բ. 2013 թվականի ընթացքում կատարվելիք բոլոր վերլուծություններում ներառել նաև բացահայտված խնդիրների լուծումների վերաբերյալ կիրառական առաջարկություններ և պարբերաբար ներկայացնել դրանք ՀՀ վարչապետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ